ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ապրիլի 2008 թվականի N 302-Ա
ք. Երևան

# ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԵՎ ԱՅԴ ԾՐԱԳՐՈՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհուրդը ո ր ո շ ո ւ մ է.

1) Հաստատել քաղաքացիական ծառայողների վերապատրաստման ծրագիրը (հավելված):
2) Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետով հաստատված ծրագրով քաղաքացիական ծառայողների վերապատրաստումն անցկացնում է «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը:
3) Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետով հաստատված ծրագրով սահմանված կարգով վերապատրաստման ենթակա են «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված համապատասխան մարմինների աշխատակազմերի հասարակայնության հետ կապերի պատասխանատու քաղաքացիական ծառայողները:
4) Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմի գիտակրթական վարչությանը՝ համակարգել և վերահսկել սույն որոշմամբ նախատեսված վերապատրաստման գործընթացը:
5) Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Մ. ԲԱԴԱԼՅԱՆ